ուտելեաց և ագանելեաց. խափանեցաւ նաւերու երթեւեկը, կոտրեցաւ տուրևառն և քսան տարուան փտած կորեակով անգամ մոխրախառն հաց պատրաստեցին ու կերան աղքատք՝ քիչ մը կաքն ալ ճաշակելու համար մահուան ժգոյն վերջին հացը։ Ամէն բան նուազեցաւ ամէն բան սուղցաւ մայրաքաղաքին մէջ՝ մինչև որ բարձրագոյն հրամանով իւրաքանչիւր գնաց մօտաւոր քաղաքներէն ճարել պարէն և կ. Պոլիս բերելով ծախել ուզած գինովը, որով սովն և սղութիւնը վերցաւ և վաճառականութիւնը վերստին չունչ առաւ, այլ յետ անկման բազմաց։

Համաճարակներ՝ ժանտախտ և քոլէրա, ընդհանրապէս հետևանք սովի անզգուշութեանց և անողջապահիկ կենցաղի, գործած են պարբերաբար մեծ աւեր 'ի կ. Պոլիս՝ անխնայ հարուածելով թէ՛ գործ թէ՛ կեանք։ 1800 էն 1840 համաճարակներու գլխաւորն եղած է 'ի կ. Պոլիս հինաւուրց ժանտախտը, որ տասն և աւելի ամ ընդ մէջ ճարակած է ու տասնորդած քսանորդած բնակիչներու մեծ մասը։ Այս ժանտախտներուն վրայ բնդարձակ գրած է գիտնօրէն, 'ի մէջ այլոց, Dr. A Brayer, D, M, P, իր Neuf années à Constantinople La Peste երկհատոր գիրքին մէջ (Ֆրանսերէն), ուր կան նաև կ. Պոլիսի միջնադարեան բնակչութեան բարուց, վաճառականութեան, թուոյն և կենցաղին վրայ մանրամասն տեղեկութիւններ ժամանակակցարար գրուած։ Իսկ քոլէրան սկսած է մանաւանդ 1840էն ետք՝ որ սաստկագոյն ճարակեցաւ 1847ին 1854ին և 1865ին, այս վերջին տարին գոհ տանելով հարիւր հազարի մօտ այր ու կին։ Ասոր փոքր կրկնութիւն մըն էր 1872ի քորէլան, և այնուհետև՝ չնորհիւ բարեխնամ կառավարութեան ձեռք առած զգուշական առողջապահիկ միջոցներուն՝ գրեթէ անհետ եղան Թուրքիայէն՝ մանաւանդ կ. Պոլիսէն՝ ժան-